01.06.2021 7705 1h. մեկ.

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

« 31 » 05 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0095-21

Ձեռնարկողը՝ **«Մեգա հաուս» ՍՊԸ**

Արմավիր, Մերձավան Երևանյան խճղ. 4-րդ նրբ. 13

Գործունեությունը՝ ***Աջափնյակ վարչական շրջան, Գ-1 թաղամաս հ.8/40 հասցեում բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***

Երևան քաղաք

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝

Գ. Գևորգյան

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0095-21
«31» 05 2021թ.

Երևան քաղաքի , Աջափնյակ վարչական շրջան Գ-1 թաղամաս, հ.8/40 հասցեում նախատեսվող բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Մեգա հաուս» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Գ-1 թաղամաս հ.8/40 հասցե

Ներածական մաս ՀՀ ք. Երևան, Աջափնյակ վարչական շրջան Գ-1 թաղամաս, հ. 8/40 հասցեում նախատեսվում է կառուցել բնակելի համալիր: Թաղամասը ունի մեկ գլխավոր մուտք, և նախատեսվում է իրականացնել ներթաղամասային ճանապարհներ:

Գործունեության նպատակն է կառուցել ժամանակակից բնակելի համալիր:

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Նկարագրական մաս. Նախատեսվում է կառուցել 32 բլոկացված տուն, թաղամասը նախատեսվում է պարսպապատել: Տները լինելու են երկհարկանի: 1-ին հարկում նախատեսված է ընդհանուր սենյակ՝ խոհանոցով և սանհանգույց, իսկ 2-րդ հարկում նախատեսված է 3 ննջարան և 2 սանհանգույց: Երեսապատման համար նախատեսված է կիրառել տրավերտին, բազալտ, սև տուֆ և փայտ:

Թաղամասի թվով 19 բնակելի տներում նախատեսված են նկուղային հարկեր, յուրաքանչյուրը 88,2 քմ մակերեսով, ընդհանուր՝ 1675.8քմ նկուղային տարածք, որոնցում նախատեսված են ջրամատակարարման, օդափոխության համակարգեր, սանհանգույց, արտաքին և ներքին մուտքեր: Նշված 1675.8քմ նկուղային մակերեսը ամբողջությամբ, եռակի չափով ավելին, բավարարում է նորմով սահմանված, մեկ անձի համար նախատեսված 0,8քմ-ից 1,0քմ տարածքին, այսինքն անհրաժեշտության դեպքում և ստեղծված պայմաններում նախատեսվող թաղամասի նկուղային հարկերում հնարավոր է պատսպարել մոտ 1600 մարդու: Նկուղով բնակելի տները առանց նկուղ բնակելի տներից և հասարակական նշանակության շինություններից հեռու են առավելագույնը 110 մ, որը նույնպես

համապատասխանում է գործող նորմին, որը սահմանում է առավելագույնը 400 մ հեռավորություն:

Հողի ընդհանուր մակերես՝ 6418.21 քմ;

Կառուցապատման մակերեսը՝ 2541.21 քմ – 39.59 %;

Ճանապարհներ և սալվածք՝ 1250.3 քմ – 19.48 %;

Կանաչապատման մակերես՝ 2626.7քմ – 40.92 %;

- Հողամասի նպատակային նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակավայրերի,
- գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման համար,
- գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Տարածքում կիրականացվի սիզամարգի ցանքս կտկվեն ծառեր և թփեր:

Նախագծային հարցերին պատասխանելու համար, ինժեներաերկրաբանական կտրվածքը մինչև պահանջվող խորությունը բացահայտելու նպատակով տեղամասում կատարվել է հորատման աշխատանքներ: Հորատահանուկի դաշտային ուսումնասիրությունների հիման վրա առանձնացվել է երեք տեսակի ինժեներաերկրաբանական էլեմենտ, որոնց նկարագրությունը տրվում է ներքևում: Ի.ե.է.1 pdQ4 Ավազակավ բաց շագանակագույն, 20-30% խճի պարունակությամբ: Շերտի հզորությունը տատանվում է 0.6-4.3 մ-ի սահմաններում: Հանդիպում է բոլոր հորատանցքերում, բացառությամբ 10-րդ և 7-րդ հորատանցքի: Ի.ե.է.2 edQ4 Խիճ ավազակավային լիցքով մինչև 30 %: Շերտի հզորությունը տատանվում է 0.3մ-ից մինչև 3.9մ-ի սահմաններում: Հանդիպում է հորատանցք N 1, 2, 3, 4, 5, 6, 7, 9, 10, 11- ում: Ի.ե.է.3 βQ3 Բազալտ մոխրագույն, ճեղքավորված, ծակոտկեն միջին ամրության: Ունի մեծաբեկոր կառուցվածք, հանդիպել է բոլոր հորատանցքերում: Տեղամասում հորատման աշխատանքների ժամանակ չի հանդիպել գրունտային ջրի մակարդակ:

Օբյեկտի ընդհանուր կոմպլեքսի շինարարության նորմատիվ տևողությունը ծրագրվում է 36,0 ամիս շինարարական աշխատանքների կատարման համար թույլատրման տրամադրման օրվանից:

Շինհրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ զերծ պահելու շրջակա միջավայրի աղտոտումից, թունավոր արտաթորումներից:

Հետիոտների անվտանգությունը ապահովելու նպատակով շինհրապարակը անհրաժեշտ է ցանկապատել թիթեղով:

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում:

Շինարարական աշխատանքների իրականացման տարածքում հողաբուսաշերտը բացակայում է:

Նախատեսվող գործունեության նախագիծը ենթադրում է նաև հողային աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է փոր

9500 խմ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ: Հանվող 1950 խմ ծավալով հողային զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր, մնացած մասը՝ կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք:

Շինարարական աշխատանքերի ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը /ծածկագիրը՝ 9120040001004/՝ 20x70*36/1000=50.4տ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, և 260 խմ շինարարական աղբը /ծածկագիրը՝ 9120060101004/, ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռանարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շաղախը և բետոնը կառաքվեն Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ եւ այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ եւ կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր եւ այլն: Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի եւ ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաեւ շինարարական անձնակազմի խմելու եւ կենցաղային նպատակների համար: Տեխնիկական ջուրը բերվելու է Երևան քաղաքի տեխնիկական ջրի ցանցից պայմանագրային հիմունքներով: Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, կենցաղային աղբն է տարեկան մեկ մարդու հաշվարկով 70 կգ 20x70x36/1000= 50.4 տ և շինարարական աղբն է 260 խմ ծավալով: Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից:

Բնակելի համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի: Ջրամատակարարումը հնարավոր է իրականացնել տարածքից մոտ 70մ հեռավորությամբ անցնող d=500մմ ջրագծից, իսկ կոյուղին տարածքից մոտ 70մ հեռավորությամբ անցնող d=800մմ կոյուղագծից, որի համար լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ:

Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով ավտոցիստեռներով: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի:

Բնակելի տների ջերմամատակարարումը իրականացվելու է անհատական ջեռուցման կաթսաներով:

Բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները. 1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ: 2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա

շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ; 3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ; 4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ: 5. Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների, 6. Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար:ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ 2020 39 Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարաության ընթացքում հատկացնել 1960000 դրամ:

Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը և վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

- Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետական նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները:
- Շինարարական հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել «Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի» կողմից հաստատված դրույթներով, շինարարական հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:
- Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:
- Շահագործման փուլում կենցաղային աղբի հավաքման և տարածքից հեռացման համար շենքերի նկուղային հարկերում նախատեսվում է տարածք, որի վերջնական տեղը կհստակեցվի օպերատորի հետ աղբահան մեքենաների տեսակը ճշտելուց հետո:
- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորում:
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականցվի փակ ծածկով մեքենաներով.
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:
- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25խմ ծավալով տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500քմ մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:
- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա:

- Շինարարական գործընթացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ, ինչպես նաև ներգրավվի ժամանակակից տեխնիկականն միջոցներ:

- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,

- Նախատեսվող կանաչապատման աշխատանքների համար անհրաժեշտ կլինի բուսահողի լիցք մոտ 675 խմ, որի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցվելով Երևանի քաղաքապետարանի հետ:

- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

- Բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

- Շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:

- Պարբերաար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները:

- Շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:

Պատճառաբանական մաս. նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևան քաղաքի, Աջափնյակ վարչական շենքում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ «Արտակարգ իրավիճակների», «Առողջապահության», «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» նախարարություններից, «Քաղաքաշինության կոմիտեից», «Աջափնյակ վարչական շրջանից» ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել «Հայտի» լրամշակումներում:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

- Բնակելի համալիրի կառուցման ընթացքում անհրաժեշտ է պահպանել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն և 2002 թվականի մարտի 6-ի թիվ 138 հրամանների պահանջները:

- Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշամն 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:»:
- Շինհրապարակի արտաքին տարածքը սահմանազատել ժամանակավոր ցանկապատով, լուսավորությունով:
- Շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ փոշու տարածումը կանխող ցանցով:
- Կանխարգելել շինհրապարակից հոսքաջրերի հեռացումը շրջակա տարածքներ:
- Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների և մնացորդային գրունտի հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:
- Տարածքի կանաչապատման աշխատանքներն իրականացնել Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատված կանաչապատման նախագծի համաձայն, որպես խնամքի պարտադիր միջոցառում ապահովել կանաչ տարածքների ոռոգումը:
- Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Մեգա հաուս» ՍՊԸ ընկերության կողմից ներկայացված, Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Գ-1 թաղամաս, հ.8/40 հասցեում բնակելի համալիրի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Ռ. Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝ Հ. Հակոբյան

ընդամենը՝ 6 էջ